ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ փետրվարի 1-ին (հունվար ամսվա փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 23 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասներկու, աշխատանքի տեղավորման՝ ինը, բնակարանի հատկացման՝ երկու քաղաքացի:

Դրամական օգնության դիմած տասներկու քաղաքցիների դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է բնակարան հատկացնելու վերաբերյալ 2 դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան